ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

03.10.2012 N--------------------------------------------

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
## ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Հարգարժա՛ն ուսուցիչներ*

Ջերմորեն շնորհավորում եմ Ուսուցչի օրվա կապակցությամբ և մասնագիտական այս նշանակալի տոնի առթիվ բոլորիդ մաղթում անսահման հաջողություններ ու երջանկություն:

Ուսուցչի բացառիկ նկարագիրը բոլոր ժամանակներում համարվում է ամենաթանկագինն ու ամենանվիրականը, որը մշտապես արժանացել և արժանանում է հասարակության հարգանքին ու երախտագիտությանը:

Տոնական այս օրվա շրջանակներում պետք է հստակ ընդգծենք նաև ուսուցչի գործունեության հանդեպ պետական հոգածության առանցքային դրսևորումներն ու վստահաբար նշենք, որ այդ ամենն այսուհետ ևս լինելու է շարունակական և ընդգրկելու է առավելագույն ծավալներ:

Բարեմաղթում եմ, որ Ձեր աշխատանքն ուղեկցվի բացառապես դրական զարգացումներով և նպաստի մերօրյա սերնդի կրթության և հայեցի դաստիարակության՝ կարևորագույն գործառույթների արդյունավետ կազմակերպմանը:

Ուսուցչի օրվա առիթով դարձյալ շնորհավորում եմ և նորովի ձեռքբերումներ ցանկանում միմիայն մեծարանքի արժանի Ձեր առաքելությանը:

*Հարգանքներով*

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ